ԳԼՈՒԽ Ա.

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Այսպէս ուրեմն, ընդ հուր և ընդ սուր անցնելով՝ Հայաստանը կոչուեց անկախ պետական գոյութեան։ Ցնծութեան աղաղակներով ու ծափերով չընդունուեց նրա անկախութիւնը։ Ընդհակառակը, շատերի համար նա նկատւում էր դժբախտութիւն։ Հիւանդ երեխայ աչխարհ բերած մօր պէս, հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգաւոր և շշնջում ականջին. «Դու իմ ուրախութիւնն ես, դու՝ դժբախտութիւնը իմ...»

Այո՛, արցունքի ու տառապանքի ծովից ծնուեց Հայաստանի անկախութիւնը։ Շատերը չէին հաւատում նրան. «անկախութիւն» ու «հանրապետութիւն» բառերը նրանք ղնում էին չակերտի մէջ։ Եւ այդպէս վարուելու հիմքերը շատ էին զօրաւոր. իրօք որ, դարհուրելի էին պայմանները, և անկախութիւնը այդ պայմաններում հեղնանք էր թւում։

Փաստօրէն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիւ 12,000 քառ. կիլոմետր աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկուած ցամաք լեռների մէջ, աշխարհի խուլ անկիւնում, ծանրաբեռնուած դաղթականներով ու որբերով, շրջապատուած ատամ կրճատացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական։ Սով ու հիւանդութիւն, աւար ու աւեր, լաց ու թշուառութիւն, կոտորածի սարսափ։ Իսկ միւս կողմ՝ Էնվէրի բանակը յաղթական՝ համաթրքական երազներով տոգորուած, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դէպի Ապշերոն ու Թուրքեստան։

Այսպէս էր դրութիւնը Հայաստանում, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարեալ շփոթ։ Մայիս 26-ից յետոյ հայ-վրացական յարաբերութիւնները լարուել էին ծայր աստիճանի. վրացիները՝ արբեցած իրենց անկախութեամբ ու գերմանական հովանաւորութեամբ՝ թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք, իրենց հերթին վրացիներին համարում էին դաւադիր, դաւաճան, իրենց բարեկեցութիւնը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող, հայ ժողովրդի գոյութեան թշնամի...

Անկախութեան առաջին իսկ օրից, վրաց կառավարութիւնն ու հասարակական կարծիքը սկսեց դարմանք ու զայրոյթ արտայայտել, որ «գերիշխան Վրաստանի» հողի վրա շարունակում է մնալ օտար պետութեան մի իշխանութիւն։ Հայերին ուղղւում էին ներկդիմի խօսքեր, թէ նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երեւանը։ Եւ այդ այն պահուն, երբ ամէն հաղորդակցութիւն Երեւանի հետ կտրուած էր և Լոռիի ու Փամբակի ձորերում թիւրքերն ու տեղական մահմեդականները մաքրագործում էին հայկական գիւղերը։